ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ջեռուցման համակարգի կցամասերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 31.10.2018թ. N 307/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.11.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Հ.Վանյանը, Ս.Սարգսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Օրակարգ</u>
<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

Հաշվի առնելով, որ «Էկոմիքս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և համակարգի միջոցով ներկայացրել է Հավելված 2-ը (կցվում է)՝ գնահատող հանձնաժողով շարունակեց հայտերի գնահատումը՝
-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը /կցվում է/՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Դուրգարյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝
- առաջին տեղը զբաղեցրած «Էկոմիքս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
-Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Էկոմիքս» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյան

Անդամներ՝ Հ.Վանյան

Ս.Սարգսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան